

«Փրփերթի Դիվելոփմենթ Քամինի» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ

2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	1
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	3
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	4

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Ներածություն	5
2.1 Հաշվետվությունների պատրաստման հիմունքները	5
2.2 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր	5
2.3 Փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականություններում և բացահայտումներում ..	13
3. Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ	14
4. Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ	15
5. Ներդրումային գույք	18
6. Վարչական ծախսեր	19
7. Ֆինանսական եկամուտ	19
8. Ֆինանսական ծախսեր	19
9. Շահութահարկ	20
10. Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	21
11. Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	21
12. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	21
13. Պահուստներ	22
14. Կրեդիտորական պարտքեր	22
15. Կապիտալ և պահուստներ	22
16. Վարկեր և փոխառություններ	22
17. Կապակցված կողմերի բացահայտումներ	23
18. Պարտավորվածություններ և պայմանական պարտավորություններ	24
19. Ֆինանսական գործիքների իրական արժեք	24
20. Ֆինանսական գործիքներ և ռիսկերի կառավարում	27



Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Ernst & Young CJSC
1 Northern Ave., office 27
Yerevan, 0001, Armenia
Tel: +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Fax: +374 (10) 500 706
www.ey.com/am

«Էրնսթ և Կանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0001
Հյուսիսային պող. 1, գրասենյակ 27
Հեռ. +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Ֆաքս. +374 (10) 500 706

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Փրոփերթի Դիվելոպմենթ Քամփնի» ՓԲԸ-ի Բաժնետերերին և Տնօրենների Խորհրդին

Մենք աուդիտի ենք ենթարկել «Փրոփերթի Դիվելոպմենթ Քամփնի» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք կազմված են 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից, նույն ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունից, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություններից, ինչպես նաև հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագրից և այլ պարզաբանող ծանոթագրություններից:

Ֆինանսական հաշվետվությունների համար աուդիտի ենթարկված անձի պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունները ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան պատրաստելու և արժանահավատ ներկայացնելու, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը, ղեկավարության կարծիքով, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է, մեր կողմից անցկացված աուդիտի հիման վրա, կարծիք հայտնել սույն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտները պահանջում են, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և պլանավորենք ու իրականացնենք աուդիտը՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով:

Աուդիտը ներառում է ընթացակարգերի իրականացում ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու նպատակով: Ընտրված ընթացակարգերը հիմնված են աուդիտորի դատողության վրա՝ ներառյալ խաբեության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու և արժանահավատ ներկայացնելու համար կիրառվող ընկերության ներքին վերահսկողության համակարգը, տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր մշակելու, սակայն ոչ ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է նաև կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների հիմնավորվածության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:



EY

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Կարծիք

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

«Էրնսթ և Յանգ» ՓԲԸ

Առաջիկա բաժնի հիմնադիր գործընկեր՝

Էրիկ Հայրապետյան

Գլխավոր տնօրեն՝ Լ. Սարգսյան՝
ի դեմս լիազորված անձ Է. Հայրապետյանի
(գործող 31.07.13թ. տրված լիազորագրի հիման վրա)

2016թ. ապրիլի 5

**Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
2015 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	2015թ.	2014թ.
Ներդրումային գույքի իրական արժեքի աճ	5	173,168	514,127
Մաշվածություն և ամորտիզացիա		(1,313)	(595)
Աշխատավարձերի հետ կապված ծախսեր		(45,682)	(18,851)
Վարչական ծախսեր	6	(26,886)	(11,135)
Այլ եկամուտ		468	4,262
Այլ ծախսեր		(12,686)	(2,714)
Ֆինանսական եկամուտ	7	1,756	65,931
Ֆինանսական ծախսեր	8	(44,487)	-
Շահույթ՝ նախքան շահութահարկը		44,338	551,025
Շահութահարկի գծով ծախս	9	(16,124)	(100,755)
Հաշվետու տարվա շահույթ		28,214	450,270
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		-	-
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական եկամուտ		28,214	450,270

Տնօրեն



Արտաշես Կազախեցյան

Գլխավոր հաշվապահ

2016թ. ապրիլի 5



Լիլիթ Զալիկյան

**Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2015 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ**

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	2015թ.	2014թ.
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ		4,364	3,964
Ներդրումային գույք	5	8,971,880	6,698,834
Փոխհատուցման ենթակա ԱԱՀ		535,851	231,543
Հետաձգված ԱԱՀ		37,717	–
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	10	109,880	190,800
		9,659,692	7,125,141
Ընթացիկ ակտիվներ			
Ընթացիկ շահութահարկի գծով կանխավճարներ		3,362	3,362
Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	11	838,711	262,053
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	12	2,562,886	329,871
		3,404,959	595,286
		13,064,651	7,720,427
Ընդամենը ակտիվներ			
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	15	6,970,270	6,970,270
Զբաղիչված շահույթ		126,034	97,820
		7,096,304	7,068,090
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	16	5,185,552	–
Հետաձգված հարկային պարտավորություններ	9	561,966	545,842
		5,747,518	545,842
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	16	115,266	–
Պահուստներ	13	89,934	64,615
Կրեդիտորական պարտքեր	14	15,629	41,880
		220,829	106,495
		5,968,347	652,337
Ընդամենը պարտավորություններ		13,064,651	7,720,427
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ			

**Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2015 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

(հազար ՀՀ դրամ)

	Սովորական բաժնետոմսեր	(Կուտակված վնաս) / Չբաշխված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
2014թ. հունվարի 1-ի դրությամբ	6,447,770	(352,450)	6,095,320
Բաժնետիրական կապիտալի թողարկում	522,500	–	522,500
Հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական եկամուտ	–	450,270	450,270
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,970,270	97,820	7,068,090
Հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական եկամուտ	–	28,214	28,214
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,970,270	126,034	7,096,304

**Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2015 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	2015թ.	2014թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Աշխատավարձ և այլ վճարներ աշխատակիցներին		(33,164)	(16,783)
Վարչական և այլ վճարված ծախսեր		(39,673)	(13,849)
Վճարված հարկեր՝ բացառությամբ շահութահարկի		(127)	(462)
Վճարված շահութահարկ		–	(1,350)
Այլ ստացված եկամուտ		480	3,480
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		(72,484)	(28,964)
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Ներդրումային գույքի ձեռքբերում		(2,888,115)	(973,814)
Հիմնական միջոցների վաճառք		–	8,000
Հիմնական միջոցների ձեռքբերում		(1,152)	(673)
Ստացված տոկոսներ		1,756	5,147
Զուտ դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		(2,887,511)	(961,340)
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից			
Մուտքեր բաժնետիրական կապիտալի թողարկումից		–	522,500
Մուտքեր ստացված վարկերից և փոխառություններից		5,238,100	–
Փոխառությունների ստացման գծով կատարված վճարումներ		(93,214)	(151,664)
Վճարված տոկոսներ		(5,906)	–
Զուտ դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		5,138,980	370,836
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/ (նվազում)		2,178,985	(619,468)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հունվարի 1-ի դրությամբ		329,871	882,957
Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		54,030	66,382
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ դեկտեմբերի 31-ի դրությամբ	12	2,562,886	329,871

1. Ներածություն

ա) Ընկերության մասին տեղեկատվություն

«Փրոփերթի Դիվելոպմենթ Քամփնի» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ «Ընկերություն») հիմնադրվել է 2007թ. դեկտեմբերի 10-ին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Ընկերության սեփականատերն է հանդիսանում Ameria Group (CY) Limited ընկերությունը (մայր կազմակերպություն):

Ընկերության իրավաբանական հասցեն է Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյանի փող.2:

Ընկերությունն իրականացնում է Երևանի կենտրոնում գտնվող բիզնես կենտրոնի շինարարությունը: Ապագայում Ընկերությունը մտադիր է զբաղվել այս բիզնես կենտրոնի շահագործմամբ:

բ) Հայաստանի գործարար միջավայրը

Հայաստանի Հանրապետությունը շարունակում է տնտեսական բարեփոխումները և իրավական, հարկային ու կանոնակարգման հայեցակարգերի զարգացումը՝ շուկայական տնտեսության պահանջներին համապատասխան: Հայաստանի տնտեսության ապագա կայունությունը մեծապես կախված է այս բարեփոխումներից և զարգացումներից, ինչպես նաև կառավարության կողմից իրականացվող տնտեսական, ֆինանսական և դրամավարկային քաղաքականությունների արդյունավետությունից:

2015 թ.-ի ընթացքում Եվրասիական տնտեսական միությունում ընդհանուր տնտեսական ակտիվության մակարդակը ցածր է եղել: Հայաստանի տնտեսության վրա ազդեցություն է ունեցել դրամական փոխանցումների նվազումը: Այնուամենայնիվ, Հայաստանում գրանցվել է ՀՆԱ-ի աճ, տարվա ընթացքում արտարժույթի տատանումները եղել են չափավոր և ֆինանսական կայունության խնդիրներ չեն գրանցվել:

Դեկլավարությունը գտնում է, որ համապատասխան քայլեր է ձեռնարկում գոյություն ունեցող պայմաններում Ընկերության կայունության ապահովման համար:

2.1 Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

Համապատասխանության մասին հայտարարություն

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՀՀՄՍ) համապատասխան, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի սկզբունքի հիման վրա՝ բացառությամբ ներդրումային գույքի, որը ներկայացված է իրական արժեքով: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով և բոլոր արժեքները կլորացված են մինչև հազար, եթե այլ բան նշված չէ:

2.2 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր

ա) Արտարժույթի վերահաշվարկ

Ընկերության գործառնական արժույթն այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որում իրավաբանական անձը գործում է: Ընկերության գործառնական արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ հայկական դրամը (ՀՀ դրամ):

Դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ հիմք ընդունելով հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից սահմանված պաշտոնական հաշվարկային դրույքաչափերը: Տարվա վերջի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված հաշվարկային դրույքաչափերի միջոցով դրամային ակտիվների և պարտավորությունների գործառնական արժույթով վերահաշվարկից առաջացած օգուտները և վնասները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Տարվա վերջի վերահաշվարկը չի կիրառվում այն ոչ դրամային հոդվածների նկատմամբ, որոնք չափվում են պատմական արժեքով:

2.2 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)**ա) Արտարժույթի վերահաշվարկ (շարունակություն)**

ՀՀ ԿԲ-ի պաշտոնական դրույքները 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված են հետևյալ աղյուսակում՝

	2015թ. դեկտեմբերի 31	2014թ. դեկտեմբերի 31
ՀՀ դրամ- ԱՄՆ դոլար	483.75	474.97
ՀՀ դրամ- Եվրո	528.69	577.47

բ) Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացվում են սկզբնական արժեքով՝ զուտ կուտակված մաշվածությունից և/կամ արժեզրկումից կուտակված կորուստներից, եթե կան այդպիսիք: Սկզբնական արժեքն իր մեջ ներառում է հիմնական միջոցի փոխարինվող մասերի ծախսումները, երկարաժամկետ շինարարական նախագծերի փոխառության ծախսումները՝ ճանաչման չափանիշներին բավարարելու դեպքում: Երբ հիմնական միջոցի նշանակալի մասերն անհրաժեշտ է պարբերաբար փոխարինել, Ընկերությունը ճանաչում է նման մասերը որպես առանձին ակտիվներ իրենց հատուկ օգտակար ծառայության ժամկետներով և համապատասխանաբար հաշվարկում է մաշվածություն: Նմանապես, երբ իրականացվում են լայնածավալ ստուգումներ, այդ ծախսումը ճանաչվում է հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքում որպես փոխարինում՝ ճանաչման չափանիշներին բավարարելու դեպքում:

Ընթացիկ վերանորոգման և տեխնիկական սպասարկման գծով ծախսերն արտացոլվում են առաջանալու պահին: Հիմնական միջոցների հիմնական մասերի փոխարինման ծախսերը կապիտալացվում են, իսկ փոխարինված մասերը՝ դուրս գրվում:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունը գնահատում է հիմնական միջոցների արժեզրկման հայտանիշերի առկայությունը: Նման հայտանիշերի առկայության դեպքում Ընկերությունը գնահատում է փոխհատուցվող գումարը, որն իրենից ներկայացնում է վաճառքի համար անհրաժեշտ ծախսերով նվազեցված ակտիվի իրական արժեքից և օգտագործման արժեքից առավելագույնը: Հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը, և արժեզրկումից կորուստը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այնքանով, որքանով այն գերազանցում է նախկին վերագնահատման հավելվածը սեփական կապիտալում:

Մաշվածություն

Հողի նկատմամբ մաշվածություն չի հաշվարկվում: Այլ հիմնական միջոցների մաշվածությունը հաշվարկվում է՝ կիրառելով ուղիղ գծային մեթոդը՝ օգտագործելով ներքոնշյալ օգտակար ծառայության ժամկետները.

	Օգտակար ծառայությունը տարիներով
Շենքեր	40 տարի
Մեքենաներ և սարքավորումներ	5-10 տարի
Տնտեսական գույք	5-10 տարի

Հիմնական միջոցների որոշակի հոդվածների համար Ընկերությունը կարող է սահմանել այլ օգտակար ծառայություն, որը չի կարող լինել պակաս, քան ցույց է տրված վերոնշյալ աղյուսակում:

Ակտիվի մնացորդային արժեքը գնահատված արժեք է, որը Ընկերությունը ենթադրում է ստանալ ակտիվի օգտակար ծառայության ժամկետը լրանալուց հետո աննկալվող վիճակում վաճառքից՝ նվազեցնեցված ակտիվի վաճառքի համար անհրաժեշտ գումարով: Ակտիվների մնացորդային արժեքները և օգտակար ծառայության ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

2.2 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

գ) Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել առանձին, սկզբնապես չափվում են ինքնարժեքով: Ձեռնարկատիրական միավորումներում ձեռքբերված ոչ նյութական ակտիվների սկզբնական արժեքն իրենից ներկայացնում է ձեռքբերման պահի դրությամբ իրական արժեքը: Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցված ցանկացած կուտակված մաշվածություն կամ արժեզրկումից կուտակված կորուստներ: Սեփական ռեսուրսների հաշվին ստեղծված ոչ նյութական ակտիվները, բացի կապիտալացված մշակման ծախսումներից, չեն կապիտալացվում և ծախսերն արտացոլվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, երբ ծախսն առաջանում է:

Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունները գնահատվում են որպես որոշակի կամ անորոշ:

Որոշակի օգտակար ծառայություն ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են օգտակար տնտեսական ծառայության ժամկետի ընթացքում և գնահատվում արժեզրկման տեսանկյունից, եթե առկա են հայտանիշեր, որ ոչ նյութական ակտիվը կարող է արժեզրկված լինել: Որոշակի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվի ամորտիզացիայի ժամկետը և ամորտիզացիայի մեթոդը վերանայվում են նվազագույնը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Ակնկալվող օգտակար ծառայության ժամկետի կամ ակտիվում մարմնավորված ապագա տնտեսական օգուտների սպառման մոդելի փոփոխությունները հաշվի են առնվում համապատասխան ամորտիզացիոն ժամկետը կամ մեթոդը փոխելու համար, և դիտվում են որպես հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություններ: Որոշակի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվի ամորտիզացիայի ծախսը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այն ծախսերի դասում, որը համապատասխանում է ոչ նյութական ակտիվի գործառնական նշանակությանը:

Մաշվածությունը հաշվեզրկվում է գծային մեթոդով ակտիվի գնահատված օգտակար ծառայության ընթացքում:

- Ծրագրային ապահովում 10 տարի

Ոչ նյութական ակտիվների որոշակի հոդվածների համար Ընկերությունը կարող է սահմանել այլ օգտակար ծառայության ժամկետ՝ կախված ակտիվի բնույթից:

Ոչ նյութական ակտիվի ապաճանաչումից օգուտները կամ վնասները չափվում են որպես ակտիվի օտարումից զուտ մուտքերի/հատույցների և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, երբ ակտիվն ապաճանաչվում է:

դ) Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը չափվում է առաջին մուտք առաջին ելք հիմունքով և ընդգրկում է պաշարների ձեռքբերման և դրանք ներկա գտնվելու վայր և պատշաճ վիճակի բերելու համար ծախսերը:

ե) Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ընկերությունը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատում է, արդյոք, առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե առկա է այդպիսի հայտանիշ կամ երբ անհրաժեշտ է իրականացնել ակտիվի տարեկան արժեզրկման ստուգում, ապա Ընկերությունը գնահատում է ակտիվի փոխհատուցվող գումարը: Ակտիվի փոխհատուցվող գումարն ակտիվի կամ դրամաստեղծ միավորի իրական արժեքից՝ հանած վաճառքի համար անհրաժեշտ ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե դրամաստեղծ ակտիվի կամ միավորի հաշվեկշռային արժեքը ավել է փոխհատուցվող արժեքից, ակտիվը համարվում է արժեզրկված և դուրս է գրվում մինչև փոխհատուցվող արժեքը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը գեղջվում են՝ օգտագործելով մինչև հարկումը գեղջման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ փողի արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը: Վաճառքի ծախսումներով նվազեցված իրական արժեքը որոշելիս հաշվի են առնվում վերջին շուկայական գործարքները: Այն դեպքում, երբ այդպիսի գործարքներ չեն կարող որոշվել, օգտագործվում է համապատասխան գնահատման մոդել: Այս հաշվարկները հիմնվում են գնահատման գործակիցների, հրապարակայնորեն գնանշվող կազմակերպությունների բաժնետոմսերի շուկայական գների և այլ առկա իրական արժեքի ցուցանիշների վրա:

2.2 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

ե) Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում (շարունակություն)

Ընկերությունն իր արժեզրկման հաշվարկները հիմնավորում է մանրամասն բյուջեով և կանխատեսումներով, որոնք պատրաստվում են առանձին՝ Ընկերության յուրաքանչյուր դրամատեղծ միավորի համար, որին բաշխված են առանձին ակտիվներ: Այս բյուջեները և կանխատեսումները սովորաբար ընդգրկում են հինգ տարվա ժամանակաշրջան: Ավելի երկար ժամանակահատվածների համար հաշվարկվում է երկարաժամկետ աճի գործակից, որը կիրառվում է հինգ տարուց հետո ակնկալվող ապագա դրամական հոսքերի նկատմամբ:

Շարունակական գործունեությանը վերաբերող արժեզրկման կորուստը՝ ներառյալ պաշարների արժեզրկումը, ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արժեզրկված ակտիվի գործառնությանը համապատասխան ծախսային հոդվածում:

զ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և կարճաժամկետ ավանդները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներառում են դրամական միջոցները բանկում և դրամարկղում, ինչպես նաև կարճաժամկետ ավանդները, որոնց մարման ժամկետը երեք ամիս կամ պակաս է:

է) Ներդրումային գույք

Ներդրումային գույքը ներառում է շինարարության մեջ գտնվող գույքը (հիմնականում գրասենյակներ, առևտրային պահեստներ և տարածքներ), որը չի օգտագործվում ոչ Ընկերության կողմից կամ Ընկերության գործառնություններում և ոչ էլ նախատեսված է գործունեության բնականոն ընթացքում վաճառքի համար, այլ պահվում է վարձակալությունից եկամուտ վաստակելու կամ դրա արժեքի աճի կամ էլ երկուսի համար, կամ ապագա օգտագործման չորշված նպատակով պահվող հողը:

Գործառնական վարձակալության շրջանակներում Ընկերության կողմից պահվող գույքում մասնակցությունը դասակարգվում է հաշվառվում է որպես ներդրումային գույք, եթե գույքը համապատասխանում է ներդրումային գույքի սահմանմանը և ճանաչված ակտիվների գծով Ընկերությունն օգտագործում է իրական արժեքի մոդելը:

Ներդրումային գույքը սկզբնապես չափվում է ինքնարժեքով՝ ներառյալ գործառնության հետ կապված ծախսումները: Հաշվեկշռային արժեքն ընդգրկում է առկա ներդրումային գույքի փոխարինման մասի արժեքը այն պահին, երբ տեղի է ունենում ծախսումը, երբ բավարարվում են ճանաչման չափանիշները և բացառում է ընթացիկ սպասարկման ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներդրումային գույքը հաշվառվում է իրական արժեքով, որն արտացոլում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ամսաթվի դրությամբ շուկայական պայմանները: Ներդրումային գույքի իրական արժեքի փոփոխությունից օգուտները և վնասները ներառվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ այն ժամանակաշրջանում, որում առաջանում են:

ը) Պահուստներ

Պահուստները ճանաչվում են, երբ Ընկերությունը ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտավորություն որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք և այդ պարտավորությունը կարելի է արժանահավատորեն չափել: Երբ Ընկերությունը ակնկալում է, որ պահուստն ամբողջությամբ կամ դրա մի մասը կփոխհատուցվի, օրինակ՝ ապահովագրական պայմանագրի շրջանակներում, փոխհատուցման ենթակա գումարը ճանաչվում է որպես առանձին ակտիվ, բայց միայն այն դեպքում, երբ փոխհատուցումը ըստ էության որոշակի է: Պահուստին վերաբերող ծախսերը ներկայացվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ զուտ ցանկացած փոխհատուցումից:

թ) Գործառնական վարձակալություն

Երբ վարձակալական պայմանագրով վարձատուից Ընկերությանը չեն փոխանցվում վարձակալվող գույքի սեփականության հետ կապված էական բոլոր ռիսկերը և հատուցները, վարձակալական բոլոր վճարները ճանաչվում են շահույթում կամ վնասում հավասարաչափ՝ վարձակալության ժամկետի ընթացքում: Վարձակալության ժամկետը չեղյալ չհամարվող այն ժամանակաշրջանն է, որի համար վարձակալը տվյալ ակտիվը վարձակալելու պայմանագիր է կնքել, ինչպես նաև հետագա ժամկետներն են, որոնց ընթացքում վարձակալը հնարավորություն ունի շարունակելու ակտիվի վարձակալությունը՝ հետագա վճարումով կամ առանց դրա, եթե վարձակալության սկզբում կարելի է խելամտորեն եզրակացնել, որ վարձակալը կիրագործի վերը նշված հնարավորությունը:

2.2 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ժ) Վարկեր և փոխառություններ

Տվյալ հոդվածն առանձնապես կարևոր է Ընկերության համար: Սկզբնական ճանաչումից հետո տոկոսային վարկերն ու փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի (US) մեթոդը: Օգուտները և վնասները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, երբ պարտավորություններն ապաճանաչվում են, ինչպես նաև արդյունավետ տոկոսադրույքով ամորտիզացնելիս:

Ամորտիզացված արժեքը հաշվարկվում է՝ հաշվի առնելով ձեռքբերման ժամանակ ցանկացած զեղչ կամ հավելավճար, ինչպես նաև վճարներ կամ ծախսումներ, որոնք հանդիսանում են US-ի բաղկացուցիչ մաս: US-ով հաշվարկված ամորտիզացիան ներառվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության ֆինանսական ծախսեր հոդվածում:

Ի) Աշխատողների վարձատրություն

Աշխատավարձերը, Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարումները, տարեկան վճարվող արձակուրդը, անաշխատունակության դիմաց վճարները, պարգևավճարները և ոչ դրամական վարձատրությունները (ինչպես օրինակ՝ աշխատողների բժշկական ապահովագրությունը) հաշվեգրվում են այն տարում, որում համապատասխան ծառայությունները մատուցվել են Ընկերության աշխատակիցների կողմից: Աշխատակիցները ստանում են թոշակներ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից օրենսդրությամբ համապատասխան: Վճարումները պետական բյուջե կատարվում են Ընկերության կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով և դրույքաչափերով: Այդ վճարումները ճանաչվում են որպես ծախս առաջացման պահին:

Լ) Հասույթի ճանաչում

Հասույթը ճանաչվում է այն չափով, որքանով հավանական է, որ ապագա տնտեսական օգուտներ կհոսեն դեպի Ընկերություն, և այդ հասույթը կարելի է արժանահավատորեն չափել՝ անկախ այն փաստից, թե երբ է վճարումը կատարվել: Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով պայմանագրով սահմանված վճարման պայմանները և բացառելով հարկերն ու տուրքերը: Ընկերությունն իր հասույթի գծով գործարքները գնահատում է որոշակի չափանիշներով՝ որոշելու, արդյոք, այն հանդես է գալիս որպես պրինցիպալ թե գործակալ: Ընկերությունը եզրակացրել է, որ այն հանդես է գալիս որպես պրինցիպալ հասույթի հետ կապված իր բոլոր գործարքներում:

Ծառայությունների մատուցում

Հասույթը ճանաչվում է այնքանով, որքանով հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն և հասույթը կարող է վստահելիորեն չափվել: Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով պայմանագրով նախատեսված վճարման պայմանները և բացառելով զեղչերը, ավելացված արժեքի հարկն ու տուրքերը: Ընկերությունն այս հարկը դիտարկում է որպես հարկային մարմինների անունից հավաքագրվող հարկ:

Տոկոսային եկամուտ

Տոկոսային եկամուտը ճանաչվում է որպես հաշվեգրված տոկոս (օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը): Տոկոսային եկամուտը ներառվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ «Ֆինանսական եկամուտներ» հոդվածում:

Խ) Հարկեր

Ընթացիկ շահութահարկ

Ընթացիկ ժամանակաշրջանի շահութահարկի ընթացիկ հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են այն գումարով, որն ակնկալվում է ստանալ հարկային մարմիններից կամ վճարել հարկային մարմիններին: Հարկերի դրույքների և հարկերի գումարների հաշվարկման համար օգտագործվող օրենքներն այն օրենքներն են, որոնք կիրառվել կամ սահմանվել են հաշվետու ամսաթվի դրությամբ այն երկրներում, որտեղ Ընկերությունը գործում է և ստանում է հարկվող եկամուտը:

Սեփական կապիտալում ուղղակիորեն ճանաչված տարրերին վերաբերող ընթացիկ շահութահարկը ճանաչվում է սեփական կապիտալում, այլ ոչ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

2.2 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

խ) Հարկեր (շարունակություն)

Ղեկավարությունը ժամանակ առ ժամանակ գնահատում է իր այն հարկային դիրքերը, որոնց նկատմամբ կիրառվող հարկային կարգավորումները հանդիսանում են մեկնաբանությունների առարկա, և անհրաժեշտության դեպքում ստեղծում է պահուստներ:

Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկը հաշվառվում է պարտավորությունների մեթոդով հաշվետու ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների հարկային բազաների և դրանց՝ ֆինանսական հաշվետվություններում արտացոլված հաշվեկշռային արժեքների ժամանակավոր տարբերությունների հիման վրա:

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, բացառությամբ՝

- ▶ երբ հետաձգված հարկային պարտավորությունը առաջանում է գույքի կամ ձեռնարկատիրական գործունեության միավորում չհանդիսացող գործարքներում ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչումից, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի կամ վնասի վրա,
- ▶ համատեղ ձեռնարկումներում, դուստր և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների հետ կապված հարկվող ժամանակավոր տարբերությունների դեպքում, որտեղ ժամանակավոր տարբերությունների հակադարձման ժամանակահատվածը կարող է վերահսկվել և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունները չեն հակադարձվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների, տեղափոխված չօգտագործված հարկային զեղչերի և չօգտագործված հարկային վնասների համար այնքանով, որքանով հավանական է, որ կլինի հարկվող շահույթ, որի դիմաց այդ նվազեցվող ժամանակավոր տարբերությունները և տեղափոխված չօգտագործված հարկային զեղչերը և վնասները հնարավոր կլինի օգտագործել՝ բացառությամբ հետևյալ դեպքերի՝

- ▶ երբ նվազեցվող ժամանակավոր տարբերություններին վերաբերող հետաձգված հարկային ակտիվն առաջանում է ձեռնարկատիրական գործունեության միավորում չհանդիսացող գործարքներում ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչումից, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի կամ վնասի վրա,
- ▶ համատեղ ձեռնարկումներում, դուստր և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների գծով նվազեցվող ժամանակավոր տարբերություններից հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են այնքանով, որքանով հավանական է, որ ժամանակավոր տարբերությունները կհակադարձվեն տեսանելի ապագայում և կլինի հարկվող շահույթ, որի դիմաց հնարավոր կլինի օգտագործել ժամանակավոր տարբերությունները:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում է այնքանով, որքանով այլևս հավանական չէ, որ բավարար հարկվող շահույթ կլինի, որի դիմաց կօգտագործվի հետաձգված հարկային ակտիվը: Չճանաչված հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճանաչվում այնքանով, որքանով հավանական է, որ ապագա հարկվող շահույթը թույլ կտա վերականգնել հետաձգված հարկային ակտիվը:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են այն հարկային դրույքաչափերով, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն այն տարում, երբ ակտիվները կիրացվեն կամ պարտավորությունները կմարվեն՝ հիմնվելով հաշվետու ամսաթվի դրությամբ կիրառված կամ կիրառման ենթակա օրենքով սահմանված հարկային դրույքաչափերի (և հարկային օրենսդրության) վրա:

Շահույթի կամ վնասի կազմում չճանաչված հոգվածների գծով հաշվարկված հետաձգված հարկը նույնպես ճանաչվում է շահույթի կամ վնասի կազմից դուրս: Հետաձգված հարկային հոգվածները ճանաչվում են դրան վերաբերող գործարքներին զուգահեռ՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ անմիջապես սեփական կապիտալում:

2.2 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

խ) Հարկեր (շարունակություն)

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե կա իրավաբանորեն ամրագրված իրավունք ընթացիկ հարկային ակտիվները հարկային պարտավորությունների նկատմամբ հաշվանցելու, և հետաձգված հարկերը վերաբերում են միևնույն հարկվող կազմակերպությանը և հարկային մարմիններին:

Որպես ձեռնարկատիրական գործունեության միավորման մաս ձեռք բերված հարկային օգուտները, որոնք այդ ամսաթվի դրությամբ չեն բավարարում առանձին ճանաչման չափանիշներին, կճանաչվեն հետագայում, փաստերի և իրողությունների փոփոխությունների վերաբերյալ նոր տեղեկատվության առկայության դեպքում: Ճշգրտումը կդիտարկվի որպես նվազեցում գույքի կից (քանի դեռ այն չի գերազանցում գույքի արժեքը), եթե այն վերաբերվում է ձեռնարկատիրական գործունեության միավորման սկզբնական հաշվառման պահին կամ՝ կարտացոլվի շահույթում կամ վնասում:

ԱԱՀ

Հասույթը, ծախսերը և ակտիվները ճանաչվում են զուտ ԱԱՀ -ից՝ բացառությամբ հետևյալ դեպքերի.

- ▶ երբ ԱԱՀ-ն առաջացել է այնպիսի ակտիվների կամ ծառայությունների գնումից, որի գծով այն չի հատուցվում հարկային մարմինների կողմից. այս դեպքում հարկը ճանաչվում է որպես ակտիվի ձեռքբերման ինքնարժեքի մաս կամ որպես ծախսային հոդված համապատասխանաբար,
- ▶ դեբիտորական և կրեդիտորական պարտքերն արտացոլելիս, որոնք ներկայացված են ԱԱՀ-ի գումարը ներառյալ:

Հարկային մարմիններից հատուցման ենթակա կամ պարտավորություն հանդիսացող իրացման հարկերի գծով գումարները ներառվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես դեբիտորական կամ կրեդիտորական պարտք:

ծ) Ֆինանսական գործիքներ՝ սկզբնական ճանաչում և հետագա չափում

ի) Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչումը և չափումը

Ֆինանսական ակտիվները ՀՀՄՍ 39 -ի շրջանակներում համապատասխանաբար դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ, փոխառություններ և դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ կամ որպես ածանցյալ գործիքներ, որոնք հանդիսանում են արդյունավետ հեջավորման գործիքներ: Ընկերությունը որոշում է ֆինանսական ակտիվի դասակարգումը սկզբնական ճանաչման ժամանակ:

Ֆինանսական գործիքների չափումը սկզբնական ճանաչման ժամանակ

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական գործիքները չափվում են իրական արժեքով՝ ճշգրտված ոչ «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական գործիքների դեպքում, ուղղակի ծախսումների չափով:

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական գործիքի իրական արժեքի լավագույն հավաստումն է գործարքի գինը: Եթե ֆինանսական գործիքի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին տարբերվում է գործարքի գնից, ապա.

- ▶ Եթե իրական արժեքը հիմնավորվում է գործող շուկայում նմանատիպ ակտիվի կամ պարտավորության համար գնանշված գնով (այսինքն՝ 1-ին մակարդակի ելակետային տվյալ), կամ հիմնված է գնահատման մեթոդի վրա, որն օգտագործում է միայն դիտելի շուկաների տվյալները, Ընկերությունը ճանաչում է սկզբնական ճանաչման պահին իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերությունը որպես օգուտ կամ վնաս:
- ▶ Բոլոր այլ դեպքերում ֆինանսական գործիքի սկզբնական արժեքը չափվում է՝ ճշգրտվելով սկզբնական ճանաչման պահին իրական արժեքի և գործարքի միջև եղած տարբերության հետաձգումով: Սկզբնական ճանաչումից հետո Ընկերությունը ճանաչում է այդ հետաձգված տարբերությունը որպես օգուտ կամ որպես վնաս միայն այն ժամանակ, երբ ելակետային տվյալները դառնում են դիտարկելի, կամ երբ ֆինանսական գործիքն ապաճանաչվում է:

2.2 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

ծ) Ֆինանսական գործիքներ՝ սկզբնական ճանաչում և հետագա չափում (շարունակություն)

Ընկերության ֆինանսական ակտիվները ներառում են դրամական միջոցները և դրանց համարժեքները և առևտրային դեբիտորական պարտքերը: 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը ոչ մի ֆինանսական ակտիվ չի դասակարգվել որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվ, մինչև մարումը պահվող ներդրումներ ու վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքներ:

Հետագա չափում

Վարկերը և դեբիտորական պարտքերը ակտիվ շուկայում չգնանշվող ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են՝ ֆիքսված և որոշակի վճարումներով: Սկզբնական չափումից հետո այդ ֆինանսական ակտիվները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը և նվազեցվելով արժեզրկումով: Ամորտիզացված արժեքը հաշվարկվում է՝ հաշվի առնելով ցանկացած գնման գնի զեղչ կամ մարժա և վճար կամ ծախս, որոնք հանդիսանում են արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մաս: Արդյունավետ տոկոսադրույքով ամորտիզացիան ներառվում է ֆինանսական եկամուտներում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

ii) Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ընկերությունը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ իրականացնում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի՝ արժեզրկված լինելու օբյեկտիվ վկայության գնահատում: Ֆինանսական ակտիվը կամ ակտիվների խումբը համարվում են արժեզրկված այն և միայն այն դեպքում, եթե կա արժեզրկման օբյեկտիվ վկայության, որպես ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձությունների («կորուստներ վկայող իրադարձություն») արդյունք, և երբ այդ իրադարձությունը կամ իրադարձություններն ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվից կամ ակտիվների խմբից ակնկալվող ապագա դրամական հոսքերի վրա, որոնք կարելի է արժանահավատորեն չափել: Արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել վարկառուի կամ վարկառուների խմբի զգալի ֆինանսական դժվարությունները, տոկոսագումարների և մայր գումարների վճարման ուշացումը կամ չվճարումը, այն հավանականությունը, որ տեղի կունենա սնանկացում կամ այլ ֆինանսական վերակազմավորում, ինչպես նաև դիտարկվող տեղեկատվությունն ակնկալվող ապագա դրամական հոսքերի չափերի նվազման վերաբերյալ, օրինակ՝ տնտեսական պայմանների փոփոխություն, որը կարող է հանգեցնել ձախողումների:

iii) Ֆինանսական պարտավորություններ

Սկզբնական ճանաչում և գնահատում

Ֆինանսական պարտավորությունները ՀՀՄՍ 39-ի համաձայն, համապատասխանաբար դասակարգվում են որպես ֆինանսական պարտավորություններ՝ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, վարկեր և փոխառություններ: Ընկերությունը որոշում է ֆինանսական պարտավորության դասը սկզբնական ճանաչման ժամանակ:

Ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ վարկերի ու փոխառությունների դեպքում՝ գումարած գործարքի ուղղակիորեն վերագրելի ծախսերը:

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի հետագա չափում

Սկզբնական ճանաչումից հետո ֆիքսված մարման ժամկետով առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը գնահատվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն գործիքները որոնք չունեն ֆիքսված մարման ժամկետ, հաշվառվում են ինքնարժեքով:

iv) Ֆինանսական գործիքների հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով գուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը գուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

2.2 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

ծ) **Ֆինանսական գործիքներ՝ սկզբնական ճանաչում և հետագա չափում (շարունակություն)**

v) **Ֆինանսական գործիքների իրական արժեքը**

Ակտիվ շուկայում շրջանառվող ֆինանսական գործիքների իրական արժեքը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին որոշվում է շուկայական գների կամ դիվերսների գնային առաջարկների համաձայն (գնման գինը երկար դիրքի համար և վաճառքի գինը կարճ դիրքի համար) առանց հաշվի առնելու գործարքի ծախսումները:

Ակտիվ շուկայում շրջանառվող ֆինանսական գործիքների իրական արժեքը որոշվում է համապատասխան գնահատման մեթոդների կիրառման միջոցով: Նման մեթոդները կարող են ներառել վերջերս տեղի ունեցած անկախ կողմերի միջև շուկայական գործարքների օգտագործումը, նմանատիպ մեկ այլ գործիքի ընթացիկ իրական արժեքին հղումը, զեղչված դրամական հոսքերի վերլուծությունը կամ գնահատման այլ մեթոդներ:

2.3 Փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականություններում և բացահայտումներում

Նոր և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ

Ընկերությունն առաջին անգամ է կիրառել որոշ ստանդարտներ և փոփոխություններ, որոնք ուժի մեջ են մտնում 2015 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Ընկերությունը վաղաժամկետ չի կիրառել որևէ այլ թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն:

Չնայած նրան, որ այս նոր ստանդարտները և փոփոխություններն առաջին անգամ կիրառվել են 2015 թ. -ին՝ դրանք էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների վրա: Յուրաքանչյուր նոր ստանդարտի կամ փոփոխության բնույթը և ազդեցությունը ներկայացված են ստորև.

Տարեկան բարեփոխումներ՝ 2010-2012 շրջան

Բոլոր բարեփոխումները ուժի մեջ են մտնում 2014 թվականի հուլիսի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Ընկերությունն առաջին անգամ է կիրառել սույն բարեփոխումները տվյալ հաշվետվության մեջ: Բարեփոխումները ներառում են.

ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտումներ»

Փոփոխությունը կիրառվում է հետընթաց և պարզաբանում է, որ կառավարման ծառայություններ մատուցող կազմակերպությունը (որը մատուցում է առանցքային կառավարչական անձնակազմի ծառայություններ) հանդիսանում է կապակցված կողմ և, համապատասխանաբար, պետք է բացահայտվի կապակցված կողմերի բացահայտումներում: Բացի այդ, կազմակերպությունը, որն օգտագործում է կառավարման ծառայություններ մատուցող կազմակերպություն, պետք է բացահայտի կառավարման ծառայությունների գծով ծախսերը: Սույն փոփոխությունը կիրառելի չէ Ընկերության համար, քանի որ Ընկերությունը չի օգտվում կառավարման ծառայություններ մատուցող կազմակերպության ծառայություններից:

Տարեկան բարեփոխումներ՝ 2011-2013 շրջան

Սույն բարեփոխումները ուժի մեջ են մտնում 2014 թվականի հուլիսի 1-ից: Ընկերությունն առաջին անգամ է կիրառել այս բարեփոխումները տվյալ ֆինանսական հաշվետվությունների մեջ: Բարեփոխումները ներառում են.

ՀՀՄՍ 3 «ձեռնարկատիրական գործունեության միավորումներ»

Փոփոխությունը կիրառվում է առաջընթաց և հստակեցնում է ՀՀՄՍ 3-ի կարգավորման շրջանակի բացառությունները.

- ▶ Համատեղ գործունեության համաձայնությունները, այլ ոչ միայն համատեղ ձեռնարկումները, ՀՀՄՍ 3-ի շրջանակից դուրս են:
- ▶ Այս շրջանակի բացառությունը կիրառվում է միայն համատեղ գործունեության համաձայնության ֆինանսական հաշվետվությունների նպատակներով հաշվապահական հաշվառման համար:

Ընկերությունը չի հանդիսանում ձեռնարկատիրական միավորում, հետևաբար, սույն փոփոխությունը կիրառելի չէ Ընկերության համար:

2.3 Փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականություններում և բացահայտումներում (շարունակություն)

ՖՀՄՍ 13 «Իրական արժեքի չափում»

Փոփոխությունը կիրառվում է առաջընթաց և պարզաբանում է, որ ՖՀՄՍ 13-ում նշված պորտֆելի բացառությունը կարող է կիրառվել ոչ միայն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, այլև նաև ՖՀՄՍ 9-ի (կամ ՀՀՄՍ 39-ի, եթե կիրառելի է) շրջանակներում գտնվող այլ պայմանագրերի համար:

Ընկերությունը չի կիրառում ՖՀՄՍ 13-ում նշված պորտֆելի բացառությունը

ՀՀՄՍ 40 «Ներդրումային գույք»

ՀՀՄՍ 40 ստանդարտում օժանդակ ծառայությունների նկարագրությունը տարբերում է ներդրումային գույք և սեփականատիրոջ կողմից զբաղեցված գույք (այսինքն՝ հիմնական միջոց) հասկացությունները: Փոփոխությունը կիրառվում է առաջընթաց կերպով և պարզաբանում է, որ որոշելու համար թե արդյոք գործարքը ակտիվի գնում է, թե ձեռնարկատիրական գործունեության միավորում, օգտագործվում է ՖՀՄՍ 3-ը, այլ ոչ թե ՀՀՄՍ 40 ստանդարտի օժանդակ ծառայությունների նկարագիրը: Սույն փոփոխությունը չի ազդել Ընկերության հաշվառման քաղաքականության վրա:

3. Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ

Դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է Ընկերության ղեկավարությունից կատարել գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվետու ամսաթվի դրությամբ ակտիվների, պարտավորությունների (այդ թվում պայմանական) և հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների ու ծախսերի գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այս գնահատումներից:

Գնահատումները և դրանց հիմքում ընկած ենթադրությունները անընդհատ վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջաններում, որոնցում կատարվում են գնահատումների վերանայումները և բոլոր հաջորդ ժամանակաշրջաններում, որոնց վրա եղել է ազդեցություն:

Ֆինանսական հաշվետվությունների մեջ ճանաչված գումարների վրա ամենաեական ազդեցություն ունեցող հաշվապահական քաղաքականությունների կիրառման մեջ ենթադրությունների էական ոլորտների, գնահատման անորոշության և կրիտիկական դատողությունների վերաբերյալ տեղեկությունը ներառված է ծանոթագրություն 5-ում՝ «Ներդրումային գույք»:

Իրական արժեքի գնահատում

Ընկերության մի շարք հաշվապահական քաղաքականություններ և բացահայտումներ պահանջում են իրական արժեքների գնահատում ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար:

Ընկերությունը ունի վերահսկողության համակարգ իրական արժեքների գնահատման գծով:

Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը գնահատելիս Ընկերությունը օգտագործում է շուկայական դիտարկելի տվյալներ այնքանով, որքանով հնարավոր է: Իրական արժեքները դասակարգված են տարբեր մակարդակների մեջ իրական արժեքների հիերարխիայում, որը հիմնված է գնահատման մեթոդներում օգտագործվող ելակետային տվյալների վրա՝

- ▶ 1-ին մակարդակ - նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաների գնանշվող (չձգրտված) գներ,
- ▶ 2-րդ մակարդակ - չափման մեթոդներ, որոնց դեպքում իրական արժեքի չափման համար անհրաժեշտ ամենացածր մակարդակի ելակետային տվյալն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի է,
- ▶ 3-րդ մակարդակ - չափման մեթոդներ, որոնց դեպքում իրական արժեքի չափման համար անհրաժեշտ ամենացածր մակարդակի ելակետային տվյալը դիտարկելի չէ:

3. Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ (շարունակություն)

Եթե ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելու համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգված են իրական արժեքների հիերարխիայի տարբեր մակարդակներում, ապա իրական արժեքի գնահատականը ամբողջությամբ դասակարգվում է իրական արժեքների հիերարխիայի նույն մակարդակում, որում ամենացածր մակարդակի ելակետային տվյալն է, որը էական է ամբողջ գնահատման համար:

Ընկերությունը ճանաչում է իրական արժեքների հիերարխիայի մակարդակների միջև փոխանցումները այն ժամանակաշրջանի վերջում, որի ընթացքում կատարվել է փոփոխությունը:

Ներդրումային գույք

Ներդրումային գույքը սկզբում չափվում է ինքնարժեքով՝ ներառյալ գործարքային ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներդրումային գույքը հաշվառվում է իրական արժեքով, որը արտացոլում է շուկայական պայմանները հաշվետու ամսաթվի դրությամբ: Ներդրումային գույքի իրական արժեքի փոփոխություններից առաջացող օգուտներն ու վնասները ընդգրկվում են իրենց առաջացման ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի մեջ՝ ներառյալ համապատասխան հարկային ազդեցությունը: Իրական արժեքները որոշվում են՝ հիմնվելով տարեկան գնահատման վրա, որը կատարվում է անկախ արտաքին լիցենզավորված գնահատողի կողմից, որը օգտագործում է Միջազգային Գնահատման Ստանդարտների Կոմիտեի կողմից խորհուրդ տրված գնահատման մոդելը:

Ներդրումային գույքը ապաճանաչվում է, երբ դրանք օտարվում են կամ երբ ներդրումային գույքը ընդմիջտ դուրս է հանվում օգտագործումից և ապագա ոչ մի տնտեսական օգուտ չի ակնկալվում դրա օտարումից: Ակտիվի՝ օտարումից զուտ մուտքերի և այդ ակտիվի հաշվեկշռային արժեքի միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում ապաճանաչման ժամանակաշրջանում:

Գույքը որպես ներդրումային վերադասակարգելը կամ հակառակը պետք է տեղի ունենա այն դեպքում, երբ փոփոխվել է դրանք օգտագործումը: Ներդրումային գույքից սեփականատիրոջ կողմից զբաղեցված գույք վերադասակարգման համար գույքի ելակետային արժեքը հետագա հաշվառման նպատակով իրական արժեքն է օգտագործման նպատակը փոփոխելու ամսաթվի դրությամբ: Երբ սեփականատիրոջ կողմից զբաղեցված գույքը դառնում է ներդրումային գույք, Ընկերությունը հաշվառում է այդպիսի գույքը հիմնական միջոցների շրջանակներում՝ նշված քաղականությանը համապատասխան մինչև օգտագործման նպատակի փոփոխման ամսաթիվը:

4. Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ

Թողարկված, բայց մինչև Ընկերության ֆինանսական հաշվետվությունների թողարկման ամսաթիվը ուժի մեջ չմտած ստանդարտները ներկայացված են ստորև: Ընկերությունը նախատեսում է կիրառել այդ ստանդարտներն այն ժամանակ, երբ դրանք ուժի մեջ կմտնեն:

ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ»

2014թ. հուլիսին ՀՀՄՍԽ-ն թողարկեց ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» ստանդարտի վերջին տարբերակը, որն արտացոլում է ֆինանսական գործիքներին վերաբերող նախագծի բոլոր փուլերն ու փոխարինում է ՀՀՄՍ 39՝ «Ֆինանսական գործիքներ. ճանաչում և չափում», ստանդարտին և ՖՀՄՍ 9-ի բոլոր նախկին տարբերակներին: Ստանդարտը դասակարգման, չափման, արժեզրկման և հեջավորման հաշվառման նոր պահանջներ է ներկայացնում:

ՖՀՄՍ 9-ը ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար, սակայն ավելի վաղ կիրառումը թույլատրելի է: Հետընթաց կիրառումը պահանջվում է, բայց համեմատական տեղեկատվությունը պարտադիր չէ: ՖՀՄՍ 9-ի ավելի վաղ տարբերակների (2009, 2010 և 2013) կիրառումը թույլատրվում է, եթե սկզբնական կիրառումը 2015թ. փետրվարի 1-ից առաջ է:

ՖՀՄՍ 9-ի որդեգրումն էական ազդեցություն չի ունենա Ընկերության ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման վրա:

4. Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ (շարունակություն)**ՖՀՄՍ 15 «Հաճախորդների հետ պայմանագրերից ստացված հասույթ»**

ՖՀՄՍ 15-ը հրապարակվել է 2014 թվականի մայիսին և հաստատում է նոր, հինգ քայլ պարունակող մոդել, որն օգտագործվելու է հաճախորդների հետ պայմանագրերից ստացված հասույթի հաշվառման համար: Այն եկամուտը, որն առաջացել է վարձակալության պայմանագրերից՝ ՀՀՄՍ 17 «Վարձակալություն» ստանդարտի շրջանակում, ապահովագրական պայմանագրերից՝ ՀՀՄՍ 4 «Ապահովագրական պայմանագրեր» ստանդարտի շրջանակում և ֆինանսական գործիքներից և այլ պայմանագրային իրավունքներից և պարտավորություններից՝ ՀՀՄՍ 39 «Ֆինանսական գործիքներ. չափումը և ճանաչումը» ստանդարտի շրջանակում (կամ ՀՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» ստանդարտի շրջանակում՝ ավելի վաղ ընդունման դեպքում), ՖՀՄՍ 15-ի շրջանակից դուրս է և չափվում է համապատասխան ստանդարտների համաձայն:

Համաձայն ՖՀՄՍ 15-ի հասույթը ճանաչվում է հաճախորդին տրամադրված ապրանքների և ծառայությունների դիմաց ակնկալվող փոխհատուցման գումարի չափով: ՖՀՄՍ 15-ի սկզբունքները ապահովում են հասույթի չափման և ճանաչման ավելի կառուցվածքային մոտեցում:

Հասույթի վերավերյալ նոր ստանդարտը կիրառելի է բոլոր կազմակերպությունների համար և կփոխարինի հասույթի ճանաչման ՖՀՄՍ բոլոր ընթացիկ պահանջները: Ամբողջական կամ ձևափոխված հետընթաց կիրառումը պարտադիր է այն հաշվետու ժամանակաշրջանների համար, որոնք սկսվում են 2018 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո, սակայն ավելի վաղ կիրառումը թույլատրելի է: Ընկերությունն այժմ գնահատում է ՖՀՄՍ 15-ի ազդեցությունը և պլանավորում է որդեգրել նոր ստանդարտն ուժի մեջ մտնելու ամսաթվին:

ՀՀՄՍ 16 և ՀՀՄՍ 38 ստանդարտների փոփոխություններ՝ «Մաշվածության և ամորտիզացիայի ընդունված մեթոդների պարզաբանում»

Փոփոխությունները հստակեցնում են ՀՀՄՍ 16-ի և ՀՀՄՍ 38-ի այն սկզբունքը, որ հասույթը արտացոլում է գործունեության (որի մի մասն է հանդիսանում օգտագործվող ակտիվը) ընթացքում ձևավորված, այլ ոչ թե ակտիվի օգտագործման ընթացքում սպառվող տնտեսական օգուտները: Արդյունքում, առաջացած հասույթի հարաբերությունը ակնկալվող ընդհանուր հասույթին չի կարող օգտագործվել հիմնական միջոցների մաշվածության հաշվարկի համար և եզակի դեպքերում կարող է օգտագործվել ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի համար: Փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2016 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Ավելի վաղ կիրառումը թույլատրելի է: Ակնկալվում է, որ այս փոփոխությունները որևէ ազդեցություն չեն ունենա Ընկերության վրա, քանի որ Ընկերությունը ոչ ընթացիկ ակտիվների նկատմամբ չի կիրառում հասույթի վրա հիմնված մաշվածության հաշվարկի մոտեցումը:

Տարեկան բարեփոխումներ՝ 2012-2014 շրջան

Սույն բարեփոխումներն ուժի մեջ են մտնում 2016 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար, և չի ակնկալվում, որ էական ազդեցություն կունենան Ընկերության վրա: Բարեփոխումները ներառում են.

ՖՀՄՍ 5 «Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատված գործունեություն»՝ *օտարման մեթոդների փոփոխություններ*

Ակտիվները (կամ օտարման խմբերը) ընդհանուր առմամբ օտարվում են կա՛մ վաճառքի, կա՛մ սեփականատերերի միջև բաշխման միջոցով: ՖՀՄՍ 5-ի փոփոխությունը պարզաբանում է, որ Նշված օտարման մեթոդներից մեկը մյուսով փոխարինելը չի Նշանակի օտարման նոր պլան, այլ կհանդիսանա սկզբնական ծրագրի շարունակություն: Հետևաբար ՖՀՄՍ 5-ի պահանջների կիրառման ընդհատում չի լինի: Փոփոխությունը նաև պարզաբանում է, որ օտարման մեթոդի փոփոխությունը չի հանգեցնի դասակարգման ամսաթվի փոփոխությանը:

Փոփոխությունը պետք է կիրառվի առաջընթաց կերպով 2016 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար, սակայն ավելի վաղ կիրառումը թույլատրելի է:

4. Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ (շարունակություն)

ՖՀՄՍ 7 «Ֆինանսական գործիքներ». Ծառայությունների մատուցման պայմանագրերի բացահայտումներ

ՖՀՄՍ 7 պահանջում է կազմակերպությունից տրամադրել բացահայտումներ ցանկացած փոխանցված և ամբողջովին ապաճանաչված ակտիվի նկատմամբ շարունակական ներգրավվածության մասին: Խորհրդին հարցրել են, թե արդյոք ծառայությունների մատուցման պայմանագրերը բավարարում են շարունակական ներգրավվածության նպատակով կիրառվող այս բացահայտման պահանջներին: Փոփոխությունը պարզաբանում է, որ ծառայությունների մատուցման պայմանագիրը, որը ներառում է միջնորդավճար, կարող է հաստատել ֆինանսական ակտիվի մեջ շարունակական ներգրավվածություն: Կազմակերպությունը պետք է գնահատի միջնորդավճարի բնույթը և ճշտի շարունակական ներգրավվածության համար անհրաժեշտ բացահայտումների համապատասխանությունը ՖՀՄՍ 7.Բ30 և ՖՀՄՍ 7.42Գ կետերում ներկայացված ցուցումներին: Փոփոխությունը պետք է կիրառվի 2016 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար, սակայն ավելի վաղ կիրառումը թույլատրելի է: Փոփոխությունը պետք է կիրառվի այնպես, որ շարունակական ներգրավվածություն կազմող ծառայությունների մատուցման պայմանագրերի գնահատումը կատարվի հետընթաց: Սակայն, պահանջվող բացահայտումները չպետք է կատարվեն ավելի վաղ ժամանակահատվածներում, քան այն տարեկան ժամանակաշրջանը, երբ կազմակերպությունն առաջին անգամ կիրառում է փոփոխություններ:

ՖՀՄՍ 7 Ֆինանսական գործիքներ. միջանկյալ հաշվետվությունների համար հաշվանցման բացահայտումների կիրառելիությունը

2011թ. դեկտեմբերին ՖՀՄՍ 7-ում կատարվել են փոփոխություններ, որպեսզի ավելացվի ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցման ուղեցույց: ՖՀՄՍ 7-ի փոփոխությունների կիրառման ամսաթվի դրությամբ նշվում է, որ կազմակերպությունը պետք է կիրառի նշված փոփոխությունները տարեկան հաշվետվությունների և նրանց միջանկյալ հաշվետվությունների համար 2013 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: ՀՀՄՍ 34-ը՝ «*Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ*», չի անդրադառնում բացահայտման այս պահանջին, և պարզ չէ՝ հարկավոր են արդյոք բացահայտումները ամփոփ միջանկյալ հաշվետվությունների համար:

Փոփոխությունը դուրս է մղում «այդ հաշվետու ժամանակաշրջանների միջանկյալ ժամանակաշրջանների ընթացքում» արտահայտությունը՝ պարզաբանելով, որ ՖՀՄՍ 7-ի բացահայտումները պարտադիր չեն միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում: Փոփոխությունը պետք է կիրառվի հետընթաց 2016 թվականի հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար, սակայն ավելի վաղ կիրառումը թույլատրելի է:

ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ. բացահայտման նախաձեռնություն

ՀՀՄՍ 1 «*Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում*» ստանդարտի փոփոխությունը ավելի շուտ պարզաբանում է գործող ՀՀՄՍ 1-ը, քան էականորեն փոխում այն: Փոփոխությունները պարզաբանում են.

- ▶ ՀՀՄՍ 1-ում ներկայացված էականության պահանջները,
- ▶ Այն առանձնահատուկ հոդվածները, որ կարող են ֆինանսական արդյունքների մասին, այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին և ֆինանսական վիճակի մասին հաշվետվություններում ներկայացվել առանձին տողով,
- ▶ Կազմակերպություններն ազատ են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները ֆինանսական հաշվետվություններում ներկայացնել իրենց ցանկացած հերթականությամբ,
- ▶ Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառված՝ ասոցիացված կազմակերպությունների և համատեղ ձեռնարկումների գծով ստացված այլ համապարփակ ֆինանսական արդյունքները պետք է համախմբված ներկայացվեն առանձին տողով և դասակարգվեն հաջորդ ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող կամ չվերադասակարգվող հոդվածների միջև:

Բացի այդ, փոփոխությունները պարզաբանում են այն պահանջները, որոնք կիրառվում են ֆինանսական վիճակի մասին, ֆինանսական արդյունքների մասին և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններում լրացուցիչ ենթատողերի ներկայացման դեպքում: Սույն փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2016 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար, սակայն ավելի վաղ կիրառումը թույլատրելի է: Չի ակնկալվում, որ սույն փոփոխությունները որևէ ազդեցություն կունենան Ընկերության վրա:

4. Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ (շարունակություն)**ՖՀՄՍ 16 «Վարձակալություն»**

2016 թ.-ի հունվարին ՀՀՄՍԽ-ն թողարկեց ՖՀՄՍ 16-ը («Վարձակալություն»), որն ուժի մեջ է մտնում 2019թ.-ից սկսած հաշվետու ժամանակաշրջանների համար: ՖՀՄՍ 16 –ի շրջանակում առաջարկված վարձակալության հաշվառումը վարձակալի տեսանկյունից մեծամասամբ նման են այն մոտեցումներին, որոնք ներկայումս կիրառվում են ՀՀՄՍ 17-ի շրջանակներում: Վարձակալները հաշվապահական հաշվեկշռում համապատասխանաբար կճանաչեն ակտիվի «օգտագործման իրավունքը» և համապատասխան ֆինանսական պարտավորությունը: Ակտիվը կամորտիզացվի վարձակալության ընթացքում, և ֆինանսական պարտավորությունը կչափվի ամորտիզացված արժեքով: Վարձատուների կողմից հաշվառումը հիմնական մասով մնում է նույնը, ինչը ՀՀՄՍ 17 ստանդարտում: Ներկայումս Ընկերությունը գնահատում է ՖՀՄՍ 16-ի ազդեցությունը իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

5. Ներդրումային գույք

Ներդրումային գույքի իրական արժեքը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ որոշվել է արտաքին, անկախ գույքի գնահատողի կողմից: Անկախ գնահատողն ունի ճանաչված և համապատասխան մասնագիտական որակավորում և տիրապետում է տվյալ տարածքում և տվյալ դասակարգի ներդրումային գույքի գնահատման արդի փորձին:

2015 և 2014թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներդրումային գույքի իրական արժեքը դասվել է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակին:

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ներդրումային գույքի իրական արժեքի համադրումը ժամանակաշրջանի սկզբի և վերջի դրությամբ:

հազ ՀՀ դրամ

	2015թ.	2014թ.
Սկզբնական մնացորդ հունվարի 1-ի դրությամբ	6,698,834	5,494,840
Ձեռքբերումներ	2,099,878	689,867
Իրական արժեքի փոփոխություն	173,168	514,127
Վերջնական մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,971,880	6,698,834

Ներդրումային գույքն իրենից ներկայացնում է Երևանի կենտրոնում գտնվող հողատարածք և այդ հողատարածքի վրա շինարարության գործընթացում գտնվող գույքեր: Ընկերությունը գույքերը ձեռք է բերել բազմափուլ բիզնես կենտրոն կառուցելու նպատակով: Գույքերը հանձնված չեն վարձակալության երրորդ անձանց:

Գնահատման մեթոդ և նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ

Գնահատումն իրականացվել է զեղչված դրամական միջոցների հոսքերի մեթոդով: Գնահատման մեթոդը հաշվի է առնում գույքը հաստատված նախագծի հիման վրա մեկ տարվա ընթացքում կառուցելու համար պահանջվող դրամական միջոցների արտահոսքերի բերված արժեքը և դրամական միջոցների զուտ հոսքերը, որոնք կառաջանան գույքի շինարարության ավարտից հետո՝ հաշվի առնելով ակնկալվող վարձակալական վճարը, օգտագործման մակարդակը և գույքի պահպանման համար անհրաժեշտ ծախսերը: Դրամական միջոցների ակնկալվող զուտ հոսքերը զեղչվում են՝ օգտագործելով ռիսկով ճշգրտված զեղչման դրույքը: Դրամական միջոցների հոսքերը հիմնված են 8 տարվա կանխատեսման ժամանակաշրջանի համար և արտահայտված են ԱՄՆ դոլարով:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են օգտագործված նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալները և խելամտորեն հնարավոր այլընտրանքային ենթադրությունների կիրառման հետևանքները:

5. Ներդրումային գույք (շարունակություն)

Ներդրումային գույքի գնահատման ոչ դիտարկելի ելակետային տվյալները հետևյալն են.

Նկարագրություն	Չափման միավոր	Միջակայք
Միջին վարձավճար (ներառյալ ԱԱՀ)	ԱՄՆ դոլար	33
Միջին զբաղեցվածության գործակից մեկնարկի ընթացքում	Տոկոսադրույք	75%
Միջին զբաղեցվածության գործակից 2-րդ տարվա ընթացքում	Տոկոսադրույք	90%
Միջին զբաղեցվածության գործակից 3-րդ տարվա ընթացքում և դրանից հետո	Տոկոսադրույք	95%
Կապիտալիզացիայի գործակից	Տարեկան տոկոսադրույք	7%
Ջեղչման դրույք շինարարության փուլում	Տարեկան տոկոսադրույք	17%
Ջեղչման դրույք շահագործման փուլում	Տարեկան տոկոսադրույք	13%
Անհրաժեշտ ներդրումներ (հազար ԱՄՆ դոլար)	Հազար ԱՄՆ դոլար	18,761

Վարձավճարների և զբաղեցվածության միջին գործակից էական աճը/(նվազումը) կիանգեցնի գույքի էական բարձր/ (ցածր) իրական արժեքի: Կապիտալիզացիայի գործակից, ձեռնարկի դրույքի և անհրաժեշտ ներդրումների էական աճը/(նվազումը) կիանգեցնի էականորեն ցածր/(բարձր) իրական արժեքի:

6. Վարչական ծախսեր**հազ 22 դրամ**

Կոմունալ ծախսեր
Մարքեթինգ և խորհրդատվություն
Չփոխհատուցվող հարկեր
Այլ

Ընդամենը վարչական ծախսեր

2015թ.	2014թ.
6,716	6,038
17,205	3,000
127	135
2,838	1,962
26,886	11,135

7. Ֆինանսական եկամուտ**հազ 22 դրամ**

Ջուտ փոխարժեքային տարբերություններից եկամուտ
Տոկոսային եկամուտ

Ընդամենը ֆինանսական եկամուտներ

2015թ.	2014թ.
–	60,784
1,756	5,147
1,756	65,931

8. Ֆինանսական ծախսեր**հազ 22 դրամ**

Ջուտ փոխարժեքային տարբերություններից ծախս
Տոկոսային ծախս

Ընդամենը ֆինանսական ծախսեր

2015թ.	2014թ.
32,151	–
12,336	–
44,487	–

9. Հահութահարկ**հազ ՀՀ դրամ****2015թ.****2014թ.****Ընթացիկ շահութահարկ՝**

Ընթացիկ շահութահարկի գծով ծախսեր

-

-

Հետաձգված հարկԺամանակավոր տարբերությունների առաջացմանը և
հակադարձմանը վերաբերող

(16,124)

(100,755)

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին**հաշվետվությունում արտացոլված շահութահարկի գծով
ծախս****(16,124)****(100,755)**

2015թ.-ին գործող դրույքը ընթացիկ և հետաձգված հարկերի համար 20% է (2014թ.՝ 20%):

հազ ՀՀ դրամ**2015թ.****2014թ.**

Հահույթ նախքան շահութահարկը

44,338

551,025

Հայաստանի Հանրապետության շահութահարկի 20% (2014թ.՝ 20%)
դրույքաչափով հաշվարկված շահութահարկ

(8,868)

(110,205)

Հարկային նպատակով չճանաչված եկամուտ

-

9,450

Զնվազեցվող ծախսեր

(7,256)

-

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին**հաշվետվությունում արտացոլված շահութահարկի գծով
ծախս****(16,124)****(100,755)****Հետաձգված հարկ**

Ֆինանսական հաշվետվությունների նպատակով ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակներով օգտագործված գումարների միջև ժամանակավոր տարբերությունները առաջացնում են զուտ հետաձգված հարկային պարտավորություններ 2015 և 2014թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Նվազեցվող ժամանակավոր տարբերությունների ժամկետը չի լրանում գործող հարկային օրենսդրության պայմաններում, բացառությամբ վնասից՝ տեղափոխված հաջորդող ժամանակաշրջան, որը կարող է տեղափոխվել հաջորդ ժամանակաշրջան 5 հաջորդող տարիների համար:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է 2015 և 2014թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ժամանակավոր տարբերությունների շարժը:

հազ ՀՀ դրամ	Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության միջոցով		
	2015թ. հունվարի 1	2015թ. հաշվետվության միջոցով	2015թ. դեկտեմբերի 31
Ներդրումային գույք	(568,066)	11,684	(556,382)
Վարկեր և փոխառություններ	-	(43,240)	(43,240)
Հետաձգված հարկային պարտավորություն	(568,066)	(31,556)	(599,622)
Այլ կրեդիտորական պարտքեր	12,923	5,064	17,987
Վնաս՝ տեղափոխված հաջորդող ժամանակաշրջան	9,301	10,368	19,669
Հետաձգված հարկային ակտիվ	22,224	15,432	37,656
Զուտ հետաձգված հարկային պարտավորություն	(545,842)	(16,124)	(561,966)

9. Շահութահարկ (շարունակություն)

<i>հազ ՀՀ դրամ</i>	<i>Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին</i>		
	<i>2014թ. հունվարի 1</i>	<i>հաշվետվության միջոցով</i>	<i>2014թ. դեկտեմբերի 31</i>
Ներդրումային գույք	(449,987)	(118,079)	(568,066)
Հետաձգված հարկային պարտավորություն	(449,987)	(118,079)	(568,066)
Այլ կրեդիտորական պարտքեր	–	12,923	12,923
Վնաս՝ տեղափոխված հաջորդող ժամանակաշրջան	4,900	4,401	9,301
Հետաձգված հարկային ակտիվ	4,900	17,324	22,224
Զուտ հետաձգված հարկային պարտավորություն	(445,087)	(100,755)	(545,842)

10. Այլ ոչ ընթացիկ ակտիվներ

<i>հազ ՀՀ դրամ</i>	<i>2015թ.</i>	<i>2014թ.</i>
Վարկեր ստանալու համար կատարված վճարներ	99,879	169,609
Այլ	10,001	21,191
Ընդամենը այլ ոչ ընթացիկ ակտիվներ	109,880	190,800

11. Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ

<i>հազ ՀՀ դրամ</i>	<i>2015թ.</i>	<i>2014թ.</i>
Ներդրումային գույքի կառուցման համար կատարված կանխավճարներ	826,296	253,500
Այլ կանխավճարներ	4,240	–
Այլ դեբիտորական պարտքեր	7,825	7,561
Պետական բյուջեից ստացվելիք գումարներ	350	992
Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	838,711	262,053

Առևտրային դեբիտորական պարտքերը տոկոսային չեն և հիմնականում ունեն 30-60 օր ժամկետայնություն:
Առևտրային դեբիտորական պարտքերը մեծ մասը ներկայացված է ՀՀ դրամով:

12. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

<i>հազ ՀՀ դրամ</i>	<i>2015թ.</i>	<i>2014թ.</i>
Կարճաժամկետ ավանդներ	2,558,216	–
Դրամական միջոցներ բանկերում	4,670	329,871
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2,562,886	329,871

12. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (շարունակություն)

Ընթացիկ բանկային հաշիվներում դրամական միջոցները պահվում են հետևյալ արժույթներով՝

հազ ԼԼ դրամ**Արժույթ**

ԱՄՆ դոլար

ԼԼ դրամ

Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

2015թ.	2014թ.
2,562,726	329,819
160	52
2,562,886	329,871

13. Պահուստներ**հազ ԼԼ դրամ**

Պարգևավճարների գծով պահուստ

Չօգտագործված արձակուրդային օրերի համար պահուստ

Ստացված ծառայությունների գծով հաշվեգրում

Ընդամենը պահուստներ

2015թ.	2014թ.
54,708	36,845
32,226	25,270
3,000	2,500
89,934	64,615

14. Կրեդիտորական պարտքեր**հազ ԼԼ դրամ**

Ստացված ծառայությունների գծով կրեդիտորական պարտքեր

Պետական բյուջեին կրեդիտորական պարտքեր

Ընդամենը կրեդիտորական պարտքեր

2015թ.	2014թ.
12,313	39,160
3,316	2,720
15,629	41,880

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը սովորաբար մարվում են 60 օրվա ընթացքում: Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի հիմնական մասը ներկայացված է հայկական դրամով:

15. Կապիտալ և պահուստներ

2015թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա էր 71,858,450 հասարակ բաժնետոմս (2014՝ 71,858,450)՝ 97 ԼԼ դրամ անվանական արժեքով (2014՝ 97):

Բոլոր հասարակ բաժնետոմսերը դասվում են հավասարապես Ընկերության մնացորդային ակտիվների նկատմամբ:

16. Վարկեր և փոխառություններ

2015 թ.ի դեկտեմբերի 31-ի դրությամբ մնացորդը բաղկացած է միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված երկու վարկերից՝ 6.25%+LIBOR տարեկան տոկոսադրույքով, որոնց մարման ամսաթիվը 2022 թ.-ի սեպտեմբերի 15-ն է:

Վարկերի նպատակը ներդրումային գույքի կառուցման ֆինանսավորումն է: 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկային պայմանագրերի շրջանակներում դեռևս չստացված վարկերի գումարը կազմում է 7,000 հազար ԱՄՆ դոլար (2014 թ.-ի 18,000 հազ. ԱՄՆ դոլար):

17. Կապակցված կողմերի բացահայտումներ**ա) Մայր կազմակերպություն և վերջնական վերահսկող կողմ**

Ընկերության անմիջական մայր կազմակերպությունն է հանդիսանում Կիպրոսում գրանցված Ameria Group (CY) -ը (նախկինում TDA Holdings Limited):

Ընկերության վերջնական վերահսկող մարմինն է հանդիսանում RKVF Ընտանեկան Հիմնադրամը, որի հիմնադիրն է պարոն Ռուբեն Վարդանյանը, իսկ վերջնական շահառու սեփականատերերը՝ նրա ընտանիքի անդամները:

(i) Դեկլարության վարձատրությունը

Տարվա ընթացքում առանցքային ղեկավար անձնակազմը ստացել է ստորև ներկայացված վարձատրությունը:

հազ ՀՀ դրամ	2015թ.	2014թ.
Աշխատավարձ և պարգևավճարներ	145,393	129,335

Դեկլարար անձնակազմի վարձատրության մի մասը Ընկերությունը կապիտալացրել է ներդրումային գույքի հաշվին:

բ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

հազ ՀՀ դրամ	Մայր կազմակերպության դուստր կազմակերպություններ		Ընդհանուր հսկողության տակ գտնվող ընկերություններ և այլ կապակցված կողմեր		Ընդամենը	
	2015թ.	2014թ.	2015թ.	2014թ.	2015թ.	2014թ.
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն՝						
Ակտիվներ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2,562,886	329,871	–	–	2,562,886	329,871
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն՝						
Վարչական ծախսեր	4,696	18,434	277	–	4,973	18,434
Այլ եկամուտ	400	400	–	8,000	400	8,400
Ֆինանսական եկամուտ	1,756	5,147	–	–	1,756	5,147

2015թ.-ին Ընկերությունը բիզնես կենտրոնի շինանարարության ֆինանսավորման համար ստացած վարկերի մի մասը տեղաբաշխել է որպես ավանդ կապակցված կողմի մոտ: Ավանդից ստացված ֆինանսական եկամուտը 26,659 հազար ՀՀ դրամի չափով նվազեցվել է ներդրումային գույքին կապիտալացված փոխառության ծախսերից:

18. Պարտավորվածություններ և պայմանական պարտավորություններ**(i) Հարկային ռիսկ**

ՀՀ հարկային, արժույթային և մաքսային օրենսդրությունները հանդիսանում են տարընթերցումների և հաճախակի իրականացվող բարեփոխումների առարկա: Հաճախակի են դեպքերը, երբ տարբեր հարկային մարմիններ տալիս են տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Այս փաստը կարող է Հայաստանի Հանրապետությունում ստեղծել էականորեն ավելի բարձր հարկային ռիսկ, քան այլ երկրներում:

Ղեկավարությունը գտնում է, որ 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը պատշաճ կերպով է իրականացնում համապատասխան օրենսդրության մեկնաբանումը և Ընկերության հարկային, արժույթային և մաքսային հարցերի շուրջ մոտեցումը ճիշտ է:

(ii) Դատական հայցեր

Իր բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունը հանդիսանում է դատական հայցերի և պահանջների օբյեկտ: Ղեկավարության համոզմամբ, հնարավոր վերջնական պարտավորությունները, որոնք ծագում են նման հայցերի և պահանջների արդյունքում, էական բացասական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական դրության կամ հետագա գործունեության արդյունքների վրա, և համապատասխանաբար ոչ մի հաշվեգրում այդ ուղղությամբ չի արվել ֆինանսական հաշվետվություններում:

(iii) Վարձակալական պարտավորություններ

Ընկերությունը ունի 12,062 հազար ՀՀ դրամի չափով վարձակալական պարտավորություններ 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ մարման ամսաթիվը՝ 2017թ.-ի նոյեմբերի 1 (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 18,641 հազար ՀՀ դրամ):

(iv) Ներդրումային գույքի կառուցման մեջ ներդնելու պարտավորություն

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը ուներ ներդրումային գույքի շինարարության մեջ 18,761 հազար ԱՄՆ դոլարի գումար ներդնելու պարտավորություն (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 18,589 հազար ԱՄՆ դոլար):

19. Ֆինանսական գործիքների իրական արժեք

Իրական արժեքն այն գումարն է, որ կստացվի ակտիվի վաճառքից կամ կվճարվի պարտավորության դիմաց շուկայի մասնակիցների միջև գնահատման պահին: Իրական արժեքի հաշվառումը կատարելիս հիմք է ընդունվում այն, որ ակտիվի վաճառման կամ պարտավորության մարման գործընթացը տեղի է ունենում:

- ▶ Ակտիվի կամ պարտավորության հիմնական շուկայում կամ
- ▶ Հիմնական շուկայի բացակայության դեպքում՝ ակտիվի կամ պարտավորության համար առավել բարենպաստ շուկայում:

Հիմնական կամ առավել բարենպաստ շուկան պետք է հասանելի լինի Ընկերության կողմից:

Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը գնահատվում է, հիմք ընդունելով այն ենթադրությունները, որ շուկայի մասնակիցները կօգտագործեն ակտիվը կամ պարտավորությունը գնահատելիս՝ ենթադրելով, որ շուկայի մասնակիցները առաջնորդվում են իրենց տնտեսական շահերով:

Ոչ ֆինանսական ակտիվի իրական արժեքը գնահատելիս հաշվի է առնվում շուկայի մասնակցի տնտեսական օգուտ ստանալու կարողությունը՝ լավագույնս օգտագործելով ակտիվը, կամ էլ վաճառելով դա մեկ այլ շուկայական մասնակցի, ով լավագույնս կօգտագործի ակտիվը:

Ընկերությունը օգտագործում է գնահատման այնպիսի միջոցներ, որոնք առավել նպատակահարմար են տվյալ հանգամանքներում և որոնք համար բավականաչափ տեղեկություն կա իրական արժեքը հաշվարկելու համար՝ առավելագույնի հասցնելով դիտարկելի տվյալների քանակը և նվազագույնի հասցնելով ոչ դիտարկելի տվյալների քանակը:

19. Ֆինանսական գործիքների իրական արժեք (շարունակություն)

Այն բոլոր ակտիվներն ու պարտավորությունները, որոնց իրական արժեքը գնահատվում է կամ բացահայտվում է ֆինանսական հաշվետվություններում, դասակարգվում են իրական արժեքի հաջորդիվ նկարագրված հիերարխիայով՝ որպես հիմք ընդունելով ամենացածր մակարդակի տվյալը, որն ընդհանուր առմամբ էական է իրական արժեքի գնահատման համար.

- ▶ 1-ին մակարդակ՝ ակտիվ շուկայում համանման ակտիվների կամ պարտավորությունների համար գնանշված (չճշգրտված) շուկայական գին,
- ▶ 2-րդ մակարդակ՝ գնահատման միջոցներ, որոնց դեպքում ամենացածր աստիճանի տվյալը, որն էական նշանակություն ունի իրական արժեքի գնահատման համար, ուղղակի կամ անուղղակի կերպով դիտարկելի է,
- ▶ 3-րդ մակարդակ՝ գնահատման միջոցներ, որոնց դեպքում ամենացածր աստիճանի տվյալը, որն էական նշանակություն ունի իրական արժեքի գնահատման համար, դիտարկելի չէ:

Ֆինանսական հաշվետվություններում պարբերականության հիմքով ճանաչվող ակտիվների ու պարտավորությունների համար Ընկերությունը որոշում է, թե, արդյո՞ք, տեղի ունեցել են անցումներ հիերարխիայի աստիճանների միջև՝ վերագնահատելով դասակարգումը (որպես հիմք ընդունելով ամենացածր մակարդակի տվյալը, որն էական է իրական արժեքի գնահատման համար) ամեն հաշվետու շրջանի վերջում:

2015 և 2014թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական գործիքների հաշվեկշռային արժեքները մոտ են դրանց իրական արժեքներին:

Իրական արժեքի գծով բացահայտումների նպատակով Ընկերությունը որոշել է ակտիվների և պարտավորությունների կարգեր՝ հիմնված դրանց բնույթի, հատկանիշների և ռիսկերի ու, ինչպես բացատրված է վերևում, իրական արժեքների հիերարխիայի մակարդակի վրա:

Ակտիվների իրական արժեքի գնահատման հիերարխիա 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

հազ 22 դրամ**Իրական արժեքի գնահատում, օգտագործելով՝**

Իրական արժեքով գնահատված ակտիվներ	Գնահատման ամսաթիվ	Ակտիվ շուկայում նշված գներ (1-ին մակարդակ)			Էական դիտարկելի տվյալներ (2-րդ մակարդակ)		Էական դիտարկելի տվյալներ (3-րդ մակարդակ)	
		Ընդամենը						
Ներդրումային գույք	2015թ. դեկտեմբերի 31	8,971,880	–	–	–	–	–	8,971,880
Ակտիվներ, որոնց իրական արժեքը բացահայտված է								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2015թ. դեկտեմբերի 31	2,562,886	2,562,886	–	–	–	–	–
Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	2015թ. դեկտեմբերի 31	7,825	–	–	–	–	–	7,825

19. Ֆինանսական գործիքների իրական արժեք (շարունակություն)*հազ ՀՀ դրամ*

		<i>Իրական արժեքի գնահատում, օգտագործելով՝</i>			
	<i>Գնահատման ամսաթիվ</i>	<i>Ընդամենը</i>	<i>Ակտիվ շուկայում նշված գներ (1-ին</i>	<i>Հալան դիտարկելի տվյալներ (2-րդ</i>	<i>Հալան դիտարկելի տվյալներ (3-րդ</i>
			<i>մակարդակ)</i>	<i>մակարդակ)</i>	<i>մակարդակ)</i>
			Պարտավորություններ, որոնց իրական արժեքը բացահայտված է		
Կրեդիտորական պարտքեր	2015թ. դեկտեմբերի 31	(12,313)	–	–	(12,313)
Վարկեր և փոխառություններ	2015թ. դեկտեմբերի 31	(5,300,818)	–	–	(5,300,818)

Ակտիվների իրական արժեքի գնահատման հիերարխիա 2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

հազ ՀՀ դրամ

		Իրական արժեքի գնահատում, օգտագործելով՝			
	Գնահատման ամսաթիվ	Ընդամենը	Ակտիվ շուկայում նշված գներ (1-ին մակարդակ)	Հալան դիտարկելի տվյալներ (2-րդ մակարդակ)	Հալան դիտարկելի տվյալներ (3-րդ մակարդակ)
Իրական արժեքով գնահատված ակտիվներ՝					
Ներդրումային գույք	2014թ. դեկտեմբերի 31	6,698,834	–	–	6,698,834
Ակտիվներ, որոնց իրական արժեքը բացահայտված է					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2014թ. դեկտեմբերի 31	329,871	329,871	–	–
Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	2014թ. դեկտեմբերի 31	7,561	–	–	7,561

հազ ՀՀ դրամ

		Իրական արժեքի գնահատում, օգտագործելով՝			
	Գնահատման ամսաթիվ	Ընդամենը	Ակտիվ	Հալան	Հալան ոչ
			շուկաներում	դիտարկելի	դիտարկելի
			գնանշվող	ելակե-	ելակե-
			գներ	տային	տային
			1-ին	տվյալներ	տվյալներ
			2-ին	3-ին	
		մակարդակ	մակարդակ	մակարդակ	մակարդակ
Պարտավորություններ, որոնց իրական արժեքը բացահայտված է					
	2014թ.				
Կրեդիտորական պարտքեր	դեկտեմբերի 31	(39,160)	—	—	(39,160)

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում իրական արժեքների հիերարխիայի մակարդակներում փոփոխություններ տեղի չեն ունեցել:

20. Ֆինանսական գործիքներ և ռիսկերի կառավարում

Ընկերության հիմնական ֆինանսական գործիքները, բացի ածանցյալ գործիքներից, ներառում են բանկում պահվող դրամական միջոցները և կարճաժամկետ ավանդները: Ընկերությունը ունի բազմաթիվ այլ ֆինանսական գործիքներ, ինչպես առևտրային դեբիտորական պարտքերը, որոնք ուղղակիորեն ծագում են իր գործարքներից:

Ընկերությունը ենթարկվում է շուկայական, պարտքային և իրացվելիության ռիսկերին:

Ընկերության ռիսկերի ընդհանուր կառավարման ծրագիրը կենտրոնացած է Հայաստանի ֆինանսական շուկաների անկանխատեսելիության և անարդյունավետության վրա և ձգտում է հասցնել նվազագույնի հնարավոր բացասական ազդեցությունը Ընկերության ֆինանսական գործունեության վրա: Ընկերության ղեկավարությունը վերահսկում է այս ռիսկերը և ֆինանսական ռիսկը: Ձեռնարկված գործողությունները ղեկավարվում են համապատասխան կարգերով և կանոնակարգերով, այնպես, որ ֆինանսական ռիսկերը հայտնաբերվում են, գնահատվում և ղեկավարվում Ընկերության կարգերին համապատասխան:

Վերոնշյալ ռիսկերի կառավարման քաղաքականությունը ներկայացված է ստորև:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի իրական արժեքների տատանումների ռիսկն է շուկայական գների փոփոխության հետևանքով: Շուկայական գինը ներառում է ռիսկի երեք տեսակ՝ տոկոսադրույքի ռիսկ, արժույթային ռիսկ և այլ գների փոփոխության ռիսկ: Շուկայական ռիսկին ենթարկվող ֆինանսական գործիքները ներառում են վարկերը և փոխառությունները, ավանդները:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի հնարավոր փոփոխության ռիսկն է տոկոսադրույքների փոփոխման արդյունքում: Ստորև բերվող աղյուսակը ցույց է տալիս տոկոսադրույքի հնարավոր փոփոխության նկատմամբ, այլ փոփոխականների հաստատուն լինելու դեպքում, Ընկերության շահույթի կամ վնասի զգալունությունը:

Շահույթի կամ վնասի զգալունությունը տոկոսադրույքի ենթադրյալ փոփոխությունների հետևանքն է մեկ տարվա զուտ տոկոսային եկամտի վրա՝ հիմնված դեկտեմբերի 31-ի դրությամբ փոխառությունների լողացող տոկոսադրույքի վրա:

	Դրույքաչափի աճ/ (նվազում) (%)	Նախքան հարկումը շահույթի վրա ազդեցություն
2015թ.		
ԱՄՆ դոլար	1.0	(51,856)
ԱՄՆ դոլար	(1.0)	51,856

Արժույթային ռիսկ

Արտարժույթային ռիսկն արտարժույթի փոխարժեքների փոփոխության հետևանքով ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի իրական արժեքների տատանումների ռիսկն է: Ընկերության ֆինանսական գործունեությունը ենթարկվում է արտարժույթի փոխարժեքների փոփոխության ռիսկին:

Արտարժույթները, մասնավորապես ԱՄՆ դոլարը, էական դեր են խաղում Ընկերության գործառնական գործունեության տնտեսական հիմքում: Համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի՝ այն արտարժույթների շուկայական միջին փոխարժեքները ՀՀ դրամի նկատմամբ, որոնցով արտահայտված են Ընկերության ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, ունեն հետևյալ տեսքը՝

	ԱՄՆ դոլար
1 հունվար 2014թ.	405.64
2014թ.-ի միջին	415.92
31 դեկտեմբեր 2014 թ.	474.97
2015թ.-ի միջին	477.95
31 դեկտեմբեր 2015 թ.	483.75

20. Ֆինանսական գործիքներ և ռիսկերի կառավարում (շարունակություն)

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Ընկերության՝ նախքան հարկումը շահույթի զգայունությունը արտարժույթի փոխարժեքների հնարավոր փոփոխության նկատմամբ, այլ փոփոխականների հաստատուն լինելու դեպքում (դրամական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքների փոփոխությունների պատճառով)՝

	Փոխարժեքի աճ/(նվազում) (%)	Նախքան հարկումը շահույթի վրա ազդեցություն
2015թ.		
ԱՄՆ դոլար	10.0	(287,956)
ԱՄՆ դոլար	(10.0)	287,956
2014թ.		
ԱՄՆ դոլար	19.1	56,679
ԱՄՆ դոլար	(19.1)	(56,679)

Իրացվելիության ռիսկ

Ընկերության նպատակն է մատակարարների կողմից տրամադրվող վարկավորման պայմանների, բանկային վարկերի և փոխառությունների օգտագործման միջոցով ֆինանսավորման շարունակականության և ճկունության ապահովումը:

Ընկերությունը գնահատում է իր ակտիվների ժամկետայնությունը ու պարտավորությունների մարման ժամկետները և պլանավորում է իր իրացվելիությունը՝ կախված տարբեր գործիքների կանխատեսվող մարումներից: Ընկերությունը կարևորում է ֆինանսական ճկունությունը, որի կարևոր մաս է կազմում ֆինանսավորման դիվերսիֆիկացված աղբյուրներից օգտվելու հնարավորության ապահովման միջոցով իրացվելիության ռիսկի նվազեցումը: Ընկերությունը օգտագործում է դրամական միջոցներ և վարկային միջոցներ՝ կարճաժամկետ իրացվելիությունը կառավարելու նպատակով: Երկարաժամկետ իրացվելիությունը կառավարվում է կապիտալի շուկաներում ֆինանսական միջոցների ավելացմամբ:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են ֆինանսական պարտավորությունների և վարկային պարտավորվածությունների գծով դրամական միջոցների չզեղչված հոսքերը՝ ըստ պայմանագրով սահմանված առավել վաղ մարման ժամկետների: Աղյուսակներում ներկայացված ընդհանուր համախառն ներհոսքն ու արտահոսքը ներկայացնում են դրամական միջոցների պայմանագրային, չզեղչված հոսքերը պարտավորությունների կամ վարկային պարտավորվածությունների գծով:

20. Ֆինանսական գործիքներ և ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ֆինանսական պարտավորությունների մարման ժամկետների վերլուծությունը 2015թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ.

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1- ից 3 ամիս	3- ից 6 ամիս	6- ից 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Արտահոսքի ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռայ ին արժեք
հազ ՀՀ դրամ							
Ոչ ածանցյալ պարտավորություններ							
Վարկեր և փոխառություններ	—	176,552	—	193,790	6,862,680	7,233,022	5,300,818
Կրեդիտորական պարտքեր	9,856	—	5,733	—	—	15,629	15,269

Ֆինանսական պարտավորությունների մարման ժամկետների վերլուծությունը 2014թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ.

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1- ից 3 ամիս	3- ից 6 ամիս	6- ից 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Արտահոսքի ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռայ ին արժեք
հազ ՀՀ դրամ							
Ոչ ածանցյալ պարտավորություններ							
Կրեդիտորական պարտքեր	41,880	—	—	—	—	41,880	41,880

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն իրենից ներկայացնում է գործընկերոջ կողմից՝ ֆինանսական գործիքի կամ հաճախորդի հետ կնքած պայմանագրի գծով պարտականությունները չկատարելու հետևանքով ֆինանսական վնասներ կրելու ռիսկը: Ընկերությունն ենթարկվում է պարտքային ռիսկին՝ կապված գործառնական գործունեության (հիմնականում առևտրային դեբիտորական պարտքերի) և ֆինանսական գործունեության հետ, ներառյալ՝ բանկերում և ֆինանսական հաստատություններում ավանդները, արտարժույթի փոխարկման գործարքները և այլ ֆինանսական գործիքները:

Ընկերության դրամական միջոցները հիմնականում պահվում են Հայաստանում գտնվող առավել հեղինակավոր բանկերում:

Ընկերության դեբիտորական պարտքերը հիմնականում բաղկացած են հարկերի գծով դեբիտորական պարտքերից և մատակարարներին կանխավճարներից, որոնք ապահովված են բանկային երաշխիքով: Ընկերությունը չի ստեղծել որևէ պահուստ դեբիտորական պարտքերի համար, քանի որ պարտքային ռիսկ մեծ չէ:

Սեփական կապիտալի կառավարում

Ընկերության կողմից կապիտալի կառավարման խնդիրներն են Ընկերության գործունեության անընդհատության ապահովումը, ինչպես նաև իր կապիտալ ծախսերի, գործառնական պահանջների բավարարումը և ընկերության զարգացման ռազմավարությանը աջակցությունը: